

Անցման Դարաշրջանին աստուածիմաստութեան ոլորտին մէջ, յիշարժան անուն մըն է գերման խորհրդապաշտ (միստիկ) փիլիսոփայ ու աստուածաբան **Յակոբ Բեօմը** (Jakob Böhme, 1575 – 1624 թ.), որու ստեղծագործութիւնները հիմնուած են տեսական լուսաւորութեան ու յարակից խորհրդապաշտական առեղծուածային փորձառութիւններու վրայ (տե՛ս Էջ 175):

Անցման Դարաշրջանին **Մարտին Լութերի** անմիջական ազդեցութեան տակ սկսած Բողոքականեան Աստուածիմաստութիւնը պիտի շարունակուէր Նաեւ Նոր Դարաշրջանին:

Նոր Դարաշրջան

Նոր Դարաշրջանի (տե՛ս **Մաս-5**, Էջ 167) մէջ յատկանշական գլխաւոր երեւոյթը կը նկատուի Բողոքականեան Աստուածիմաստութիւնը, որու ոլորտին մէջ **Յակոբ Բեօմըն** ետք, յիշարժան անուններ եղան.-

- **Ջոն Պորդէճ** (John Pordage, 1607 – 1681 թ.)
- **Ե. Գ. Գիշտել** (Johan Georg Gichtel, 1638 – 1710 թ.),
- **Է. Սվեդենբորգ** (Emanuel Swedenborg, 1688 – 1772 թ.),
- **Ֆ. Զ. Էօտինգեր** (Friedrich Christoph Oetinger, 1702 – 1782 թ.),
- **Լ. Կ. դը Սեն-Մարտին** (Louis Claude de Saint-Martin, 1743 – 1803 թ.) եւ
- **Ուիլիամ Բլէյք** (William Blake, 1757 – 1827 թ.):

Ներքրիստոնէական ոլորտին մէջ, փիլիսոփայութեան եւ բանականութեան առնչութիւնը աստուածաբանութեան հետ յոյժ վիճելի էր եւ Է: Մինչ *Կաթոլիկ Եկեղեցին* (Catholic Church), փիլիսոփայութիւնը եւ բանականութիւնը կ'արժեւորէ, որպէս ճանաչողական ուղիներ, որոնցմով կարելի է զԱստուած ճանչնալ ու աստուածայինը իմանալ, հետագային, *Բողոքական Եկեղեցին* (Protestantic Church), աւելի կեդրոնանալով Սբ. Գիրքին վրայ եւ կարելորելով Յովհաննու Յայտնութիւնը (Revelation), բոլորովին կը մերժէ փիլիսոփայական բանական ուղիով զԱստուած ճանաչումի կարելիութիւնը, սա Նոյնիսկ համարելով դաւաճանութիւն՝ հաւատքի հանդէպ:

Մնալով ներքրիստոնէական ոլորտին մէջ, այս նիւթի քննարկման ատեն կը հանդիպինք Նոյնքան վիճելի «*Քրիստոնէական փիլիսոփայութիւն*» (Christian Philosophy) բառակապակցութեան, որ այնքան ալ յստակ սահմանումներ ու բնորոշում չունի:

«Քրիստոնէական փիլիսոփայութիւն» բառակապակցութեամբ կարելի է ընդհանրապէս երկու ուղղութիւն հասկնալ, նախ՝

- 1) Միջնադարեան փիլիսոփայութիւնը (ընդհանրապէս), որ կը կոչուի Նաեւ *Դպրական փիլիսոփայութիւն* (սքոլաստիկ փիլիսոփայութիւն, Scholastic philosophy), եւ
- 2) «Քրիստոնէական փիլիսոփայութիւն» բառակապակցութեամբ, կարելի է հասկնալ Նաեւ շատ աւելի ուշ, Նոր Դարաշրջանի 19-րդ. դարուն յառաջա-